# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.08.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/58**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Վ. Գաբրիելյանի (նույնականացման քարտի համար՝ 000621557)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչներ

Վ. Նավասարդյանի (լիազորագիր՝ տրված 05.08.2021թ.),

Ա. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 05.08.2021թ.),

քննելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների /ESET NOD32 Smart Security Business Edition, ESET Mail Security for Microsoft Exchange Server/ ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Վահե Գաբրիելյանի կողմից 02.08.2021թ. ներկայացված (03.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/58 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>Վահե Գաբրիելյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վահե Գաբրիելյանը (հետայսու նաև՝ Բողոքաբեր) 02.08.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«2021 թվականի հուլիսի 28-ին www. armeps.am էլեկտրոնային կայքում հրապարակվել ՀՀԷՆ- ԷԱՃԾՁԲ-21/56 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարություն և հրավեր:

Գնման ընթացակարգում Պատվիրատուն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության կողմից 04.05.2017 թվականին հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների խախտումներ, որի արդյունքում անհնարին է դարձել մրցակցությունը, ինչը հիմնավորվում է ներքոշարադրյալ փաստարկներով և պատճառաբանություններով:

2. Բողոքի ներկայացման համար էական նշանակություն ունեցող փաստերի շարադրանքը.

2.1. Էկոնոմիկայի նախարարության կողմից 28.07.2021 թվականին www. armeps.am էլեկտրոնային կայքում հրապարակվել է ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56 ծածկագրով էլեկտրոնային անուրդճի մասին հայտարարություն և «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն»-ի կարիքների համար՝ «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56 ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների /ESET NOD32 Smart Security Business Edition, ESET Mail Security for Microsoft Exchange Server ձեռքբերման հրավեր» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավեր (այսուհետ՝ Հրավեր):

2.2. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 14:00-ը:

2.3. Հրավերի՝ «Գնման առարկայի բնութագիրը» մասում սահմանված է հետևյալը.

Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56 ծածկագրով ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների /ESET NOD32 Smart Security Business Edition, ESET Mail Security for Microsoft Exchange Server/ ձեռքբերման հրավեր» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժնում՝

| Չափաբաժինների համարները | Չափաբաժնի անվանումը |
|---|---|
| 1 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ/ESET NOD32 Smart Security Business Edition/ |
| 2 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ/ESET Mail Security for Microsoft Exchange Server/ |

Ծառայության մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածում:

2.4. Հրավերին կից թիվ 5 Հավելվածում առկա «Պետության կարիքների համար մատուցման պետական գնման պայմանագիր» նախագծին կից թիվ 1 հավելվածով սահմանված է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ամբողջական անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
| 1 | 72261100/8 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ/ESET NOD32 Smart Security Business Edition/ | Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ՝ այդ թվում ESET NOD32 Smart Security Business Edition համակարգչային հակավիրուսային ծրագրի արտոնագրի երկարացում 1 տարի ժամկետով, 300 համակարգչի համար: Հակավիրուս և հակաարտես Փաստաթղթի պաշտպանություն, էլ. փոստի պաշտպանություն, Antispam պաշտպանություն, Web access պաշտպանություն, Anti-Stealth տեխնոլոգիա Ծրագրային փոփոխման հայտնաբերում Ներխուժման հայտնաբերում CodeRed , SqlSLammer, Sasser, Conficker որդ-ծրագրերի հայտնաբերում RPC/DCOM հարցակման հայտնաբերում ARP and DNS Poisining հարցակման հայտնաբերում TCP and UDP Ports Scanning հարցակման հայտնաբերում SMB Relay հարցակման հայտնաբերում Արգելափակել հայտնաբերված վտանգավոր հասցեները Փաթեթային զնում Ստուգել TCP միացման կարգավիճակ TCP protocol ծանրաբեռնվածության հայտնաբերում Մուտքային եւ ելքային TCP և UDP փաթեթների ստուգում (checksum վավերացում) ICMP protocol հաղորդագրության ստուգում Convert data in ICMP protocol detection Խափանումների հայտնաբերում Բոլոր արգելափակված միացումների լոգեր(logs) Որդ-ծրագրերի հարցակման լոգեր(logs) Կենտրոնացված սերվեր Հակավիրուսային ծրագրի հեռացված ներբեռնում համակարգչին Հակավիրուսային ծրագրի կատարված աշխատանքի մոնիթորինգ և հեռավար կառավարում կենտրոնացված սերվերից կատարվող թարմացումների՝ Threat logs, Firewall logs, Event logs, Scan logs, Configuring tasks Հակավիրուսային ծրագրի հեռացված կառավարում՝ SysInspector Script Task |
| 2 | 72261100/7 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ/ESET Mail Security for Microsoft Exchange Server/ | Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ՝ այդ թվում ESET Mail Security for Microsoft Exchange Server ծրագրի արտոնագրի երկարացում 1 տարի ժամկետով, 300 էլ.հասցեի համար: Արտոնագիրը նախատեսվում է սույն թվականի սեպտեմբերի «1»-ին ակտիվացնելու համար: էլեկտրոնային փոստի անվտանգության համակարգ Համակարգը նախատեսված է պաշտպանել էլեկտրոնային փոստային սերվերները բոլոր տեսակի վնասակար ծրագրերից և ֆիլտրել էլեկտրոնային հաղորդագրությունները «Spam, Phishing» և նմանատիպ այլ կեղծ և վնասակար հաղորդագրություններից իրական ժամանակում: Համակարգը պետք է նախատեսված լինի աշխատել «Quarantine mailbox» ռեժիմում, այդպիսով նախատեսել էլեկտրոնային նամակների իզոլացում և ադմինիստրատորի կողմից վերստուգման հնարավորության ընձեռում: Համակարգը պետք է աշխատի միջանցային ռեժիմում էլեկտրոնային համակարգի սերվերի հետ մեկտեղ: Համակարգը պետք է պաշտպանի Microsoft Exchange Server-ը և նրանում պարունակվող էլ.նամակագրությունները: Խափանումների հայտնաբերում Բոլոր արգելափակված միացումների լոգեր(logs) Spam, Phishing ծրագրերի հարցակման լոգեր(logs) Կենտրոնացված սերվեր Ծրագրի կատարված աշխատանքի մոնիթորինգ Կենտրոնացված սերվերից կատարվող թարմացումներ |

3. Բողոքի իրավական հիմնավորումները և պատճառաբանությունները.

3.1. Տեխնիկական բնութագրի 1 և 2 չափաբաժիններում ներկայացված ծառայությունների նկարագրությունը, դրանց առաջադրվող պահանջները չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի իմպերատիվ պահանջներին:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ.

3.2. Մեջբերված իրավական նորմերի լույսի ներքո պետք է փաստել, որ գնումների հետ կապված իրավահարաբերությունների կարևորագույն սկզբունքներից են մրցակցությունը և ոչ խտրականությունը, որոնց խախտման դեպքում գնման ողջ գործընթացի էությունը խեղաթյուրվում է և հանգեցնում է գնումների գործընթացին իրավահավասարության սկզբունքի խախտմանը:

Սույն պարագայում, Հրավերի «Գնման առարկայի բնութագիրը» մասում սահմանված տեխնիկական բնութագիրը պարունակում է հղում ESET NOD32 Smart Security Business Edition և ESET Mall Security Server ապրանքային նշաններին, սակայն բնութագրում բացակայում է «կամ համարժեք» սահմանումը, ինչև Օրենքով և Կարգով սահմանված իմպերատիվ պահանջի կոպիտ խախտում է հանդիսանում, որի արդյունքում զնման բնութագրերը սահմանափակվում են մեկ արտադրողով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից խնդրում եմ՝

Պարտավորեցնել թիվ ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություն. վերացնելով բողոքում մատնանշված խախտումները: Փոփոխության կատարման անհնարինության դեպքում թիվ ՀՀԷՆ- ԷԱՃԾՁԲ-21/56 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած»:

Այնուհետև՝ 04.08.2021թ., Բողոքաբերը ի լրումն վերը շարադրված բողոքի հայտնել է հետևյալը.

«Թիվ ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ իմ կողմից սույն թվականի օգոստոսի 2-ին ներկայացրած բողոքը անհրաժեշտ եմ համարում լրացնել հետևյալ փաստարկերով:

Պատվիրատուի կողմից հրապարակված Հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը պարունակում է Anti-Stealih տեխնոլոգիա և նշումները:

«Anti-Stealth»- հանդիսանում է ESET (Essential Security against Evolving Threats) նշված տերմինը ընկերության կողմից մշակված տեխնոլոգիա և օգտագործվում է բացառապես ESET ընկերության պրոդուկտներում:

«SysInspecto» հանդիսանում է ESET (Essential Security against Evolving Threats) ընկերության կողմից մշակված օժանդակ համակարգչային ծրագիր, որը օգտագործվում է ընդհանուր ծրագրակազմում (տես կից ներկայացվող ESET ընկերության կայքէջից արտատպված տեղեկատվությունը նշված ծրագրի մասին):

Ներկայացվածից ակնհայտ է, որ Պատվիրատի կողմից ուղղակի և ա նուղ ղա կի ձևով հղում է կատարվում արտադրողի ապրանքային նշանի, որոշակի արտադրանքի վրա, ինչը չի կարող համարվել գնման առարկայի հատկանիշները սահմանող ֆունկցիոնալ նկարագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ներկայացված փաստարկներից հետևում է, որ Պատվիրատուի կողմից հրապարակված Հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը հակասում է վերոնշյալ իրավական նորմի պահանջներին:

Խնդրում եմ, սույն փաստաթուղթը համարել որպես իմ կողմից ներկայացված բողոքի իրավական և փաստական հիմքերի լրացում»:

Բողոքաբերը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.08.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

**2. <u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 09.08.2021թ թիվ 09/11536-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի օգոստոսի 4-ի N ԲՔԱ-ԳՆ/2/12416-2021 գրության՝ Վահե Գաբրիելյանի կողմից 2021 թվականի օգոստոսի 2-ին ներկայացված N ԳԲՔԱ-ՆԳ-2021/58 բողոքի վերաբերյալ ներկայացնում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) դիրքորոշումը.

Նախարարությունը իր բնականոն աշխատանքային գործընթացները կազմակերպելու համար օգտագործում է տարբեր ծրագրային ապահովումներ, դրանք կարող են լինել, Windows օպերացիոն համակարգ, Windows սերվեր օպերացիոն համակարգ, Linux օպերացիոն համակարգ, անվտանգության ապահովման տարբեր համակարգեր՝ թե ֆիզիկական սարքավորման, թե ծրագրային ապահովման տեսքով: Դրանցից է նաև ESET NOD32 Smart Security Business Edition, ESET Mail Security for Microsoft Exchange Server-ը, որոնք ապահովում են նախարարության ենթակայության տակ գտնվող համակարգիչների, սերվերների, էլեկտրոնային համակարգերի, մասնավորապես՝ էլեկտրոնային հասցեների և նամակագրության շրջանառության անվտանգությունը:

Բոլոր լուծումները և համակարգերը ներդրվելուց առաջ ուսումնասիրվել են Նախարարության տեխնիկական հնարավորությունները և անձնակազմի՝ մասնավորապես SS ստորաբաժանման աշխատակիցների, գիտելիքները: Ինչպես նաև SS անձնակազմը անցել է վերապատրաստման դասընթացներ, որպեսզի կարողանա տեղադրել և կառավարել տվյալ համակարգը: Վերապատրաստման դասընթացների շնորհիվ տվյալ համակարգերը չեն պահանջում լրացուցիչ սպասարկում այլ կազմակերպության կողմից, քանի որ լիակատար սպասարկվում է SS վերապատրաստված անձնակազմի կողմից, որն

էլ իր հերթին չի պահանջում համակարգերի սպասարկման համար ծախսվող լրացուցիչ գումարներ:

ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների գնման հրավերում գնման առարկա է հանդիսանում տվյալ համակարգերի արտոնագրերի ձեռքբերումը (երկարացումը), այսինքն՝ համակարգերը նոր չեն ներդրվելու, ներդրված են և կարգաբերված են մոտ 300 համակարգիչների վրա և կիրառվում են արդեն 1 տարուց ավելի: Մինչդեռ նման համակարգերի փոփոխությունը այլ տիպի համակարգերով իրենից ենթադրում է ամբողջ SS ենթակառուցվածքի փոփոխություն, որը կատարվում է խիստ անհրաժեշտության և հիմնավորվածության դեպքում, բացի այդ ենթադրում է տեխնիկական աշխատանքների իրականացման տեսանկյունից աշխատատար և երկարատև պրոցես: Նախարարությունը նման փոփոխությունների գնալու պարագայում հաշվի է առել նաև իր ներկայիս տեխնիկական հնարավորությունները, ինչպես նաև SS ստորաբաժանման ծանրաբեռնվածությունն ու հնարավորությունները: Հարկ ենք համարում նշել նաև, որ նման համակարգերի ներդրումը իրենից ենթադրում է ուսումնասիրման, թեստավորման գործընթացներ, որի իրականացումից հետո միայն այն կարող է դիտարկվել որպես նախընտրելի համակարգ, ինչն էլ ներկայումս Նախարարությունը նպատակահարմար չի համարում ժամանակի սղությամբ և աշխատատարությամբ պայմանավորված:

Հաշվի առնելով վերոգրյալ բոլոր փաստարկները՝ Նախարարությունն իր բնականոն գործունեությունը ապահովելու համար նպատակահարմար է գտել շարունակել տվյալ համակարգերի կիրառությունը՝ հաշվի առնելով դրանց բավարար արդյունավետությունը, ֆինանսական լրացուցիչ միջոցների չօգտագործումը:

Միաժամանակ, հաշվի առնելով համակարգերի արտոնագրերի ժամկետների ավարտվելու հանգամանքը՝ խնդրում ենք բողոքը դիտարկել հնարավորինս սեղմ ժամկետներում, քանի որ վերջինիս չերկարացումը կարող է հանգեցնել բոլոր համակարգիչների, սերվերների և էլեկտրոնային նամակագրության համակարգի անվտանգության խաթարմանը և դրանցով պայմանավորված նաև Նախարարության բնականոն աշխատանքների խաթարմանը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.08.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

**3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների /ESET NOD32 Smart Security Business Edition, ESET Mail Security for Microsoft Exchange Server/ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական-բնութագրով, գնման առարկայի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ամբողջական անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
| 1 | 72261100/8 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների/ESET NOD32 Smart Security Business Edition/ | Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ՝ այդ թվում ESET NOD32 Smart Security Business Edition համակարգչային հակավիրուսային ծրագրի արտոնագրի երկարացում 1 տարի ժամկետով, 300 համակարգչի համար: Հակավիրուս և հակալրտես Փաստաթղթի պաշտպանություն, Էլ. փոստի պաշտպանություն, Antispam պաշտպանություն, Web access պաշտպանություն, Anti-Stealth տեխնոլոգիա Ծրագրային փոփոխման հայտնաբերում Ներխուժման հայտնաբերում CodeRed , SqlSLammer, Sasser, Conficker որդ-ծրագրերի հայտնաբերում RPC/DCOM հարցակման հայտնաբերում ARP and DNS Poisining հարցակման հայտնաբերում TCP and UDP Ports Scanning հարցակման հայտնաբերում SMB Relay հարցակման հայտնաբերում Արգելափակել հայտնաբերված վտանգավոր հասցեները Փաթեթային զննում Ստուգել TCP միացման կարգավիճակ TCP protocol ծանրաբեռնվածության հայտնաբերում Մուտքային եւ ելքային TCP և UDP փաթեթների ստուգում (checksum վավերացում) ICMP protocol հաղորդագրության ստուգում Convert data in ICMP protocol detection Խափանումների հայտնաբերում Բոլոր արգելափակված միացումների լոգեր(logs) Որդ-ծրագրերի հարցակման լոգեր(logs) Կենտրոնացված սերվեր Հակավիրուսային ծրագրի հեռացված ներբեռնում համակարգչին Հակավիրուսային ծրագրի կատարված աշխատանքի մոնիթորինգ և հեռավառ կառավարում կենտորնացված սերվերից կատարվող թարմացումների՝ Threat logs, Firewall logs, Event logs, Scan logs, Configuring tasks Հակավիրուսային ծրագրի հեռացված կառավարում՝ SysInspector Script Task |
| 2 | 72261100/7 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների/ESET Mail Security for Microsoft Exchange Server/ | Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ՝ այդ թվում ESET Mail Security for Microsoft Exchange Server ծրագրի արտոնագրի երկարացում 1 տարի ժամկետով, 300 էլ.հասցեյի համար: Արտոնագիրը նախատեսվում է սույն թվականի սեպտեմբերի «1»-ին ակտիվացնելու համար: Էլեկտրոնային փոստի անվտանգության համակարգ Համակարգը նախատեսված է պաշտպանել էլեկտրոնային փոստային սերվերները բոլոր տեսակի վնասակար ծրագրերից և ֆիլտրել էլեկտրոնային հաղորդագրությունները «Spam, Phishing» և նմանատիպ այլ կեղթ և վնասակար հաղորդագրություններից իրական ժամանակում: Համակարգը պետք է նախատեսված լինի աշխատել «Quarantine mailbox» ռեժիմում, այդպիսով նախատեսել էլեկտրոնային նամակների իզոլացում և ադմինիստրատորի կողմից վերստուգման հնարավորության ընձեռում: Համակարգը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պետք է աշխատի միջցանցային ռեժիմում էլեկտրոնային համակարգի սերվերի հետ մեկտեղ: Համակարգը պետք է պաշտպանի Microsoft Exchange Server–ը և նրանում պարունակվող էլ.նամակագրությունները: Խափանումների հայտնաբերում Բոլոր արգելափակված միացումների լոգեր(logs) Spam, Phishing ծրագրերի հարցակման լոգեր(logs) Կենտրոնացված սերվեր Ծրագրի կատարված աշխատանքի մոնիթորինգ Կենտորնացված սերվերից կատարվող թարմացումներ |

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Վահե Գաբրիելյանի կողմից 02.08.2021թ. ներկայացված բողոքը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի

բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպես, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների /ESET NOD32 Smart Security Business Edition, ESET Mail Security for Microsoft Exchange Server/ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-21/56» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական-բնութագրով, գնման առարկայի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ամբողջական անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
| 1 | 72261100/8 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ/ESET NOD32 Smart Security Business Edition/ | Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ՝ ***այդ թվում ESET NOD32 Smart Security Business Edition համակարգչային հակավիրուսային ծրագրի արտոնագրի երկարացում 1 տարի ժամկետով***, 300 համակարգչի համար: Հակավիրուս և հակալրտես Փաստաթղթի պաշտպանություն, Էլ. փոստի պաշտպանություն, Antispam պաշտպանություն, Web access պաշտպանություն, Anti-Stealth տեխնոլոգիա Ծրագրային փոփոխման հայտնաբերում Ներխուժման հայտնաբերում CodeRed , SqlSLammer, Sasser, Conficker որդ-ծրագրերի հայտնաբերում RPC/DCOM հարցակման հայտնաբերում ARP and DNS Poisining հարցակման հայտնաբերում TCP and UDP Ports Scanning հարցակման հայտնաբերում SMB Relay հարցակման հայտնաբերում Արգելափակել հայտնաբերված վտանգավոր հասցեները Փաթեթային զննում Ստուգել TCP միացման կարգավիճակ TCP protocol ճանրաբեռնվածության հայտնաբերում Մուտքային եւ ելքային TCP և UDP փաթեթների ստուգում (checksum վավերացում) ICMP protocol հաղորդագրության ստուգում Convert data in ICMP protocol detection Խափանումների հայտնաբերում Բոլոր արգելափակված միացումների լոգեր(logs) Որդ-ծրագրերի հարցակման լոգեր(logs) Կենտրոնացված սերվեր Հակավիրուսային ծրագրի հեռացված ներբեռնում համակարգչին Հակավիրուսային ծրագրի կատարված աշխատանքի մոնիթորինգ և հեռավառ կառավարում կենտորնացված սերվերից կատարվող թարմացումների՝ Threat logs, Firewall logs, Event logs, Scan logs, Configuring tasks Հակավիրուսային ծրագրի հեռացված կառավարում՝ SysInspector Script Task |
| 2 | 72261100/7 | ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ/ESET Mail Security for Microsoft Exchange Server/ | Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ՝ ***այդ թվում ESET Mail Security for Microsoft Exchange Server ծրագրի արտոնագրի երկարացում 1 տարի ժամկետով***, 300 էլ.հասցեյի համար: Արտոնագիրը նախատեսվում է սույն թվականի սեպտեմբերի «1»-ին ակտիվացնելու համար: Էլեկտրոնային փոստի անվտանգության համակարգ Համակարգը նախատեսված է պաշտպանել էլեկտրոնային փոստային սերվերները բոլոր տեսակի վնասակար ծրագրերից և ֆիլտրել էլեկտրոնային հաղորդագրությունները «Spam, Phishing» և նմանատիպ այլ կեղթ և վնասակար հաղորդագրություններից իրական ժամանակում: Համակարգը պետք է նախատեսված լինի աշխատել «Quarantine mailbox» ռեժիմում, այդպիսով նախատեսել էյեկտրոնային նամակների իզոլացում և ադմինիստրատորի կողմից վերստուգման հնարավորության ընձեռում: Համակարգը պետք է աշխատի միջցանցային ռեժիմում էլեկտրոնային համակարգի սերվերի հետ մեկտեղ: Համակարգը պետք է պաշտպանի Microsoft Exchange Server–ը և նրանում պարունակվող էլ.նամակագրությունները: Խափանումների հայտնաբերում Բոլոր արգելափակված միացումների լոգեր(logs) Spam, Phishing ծրագրերի հարցակման լոգեր(logs) Կենտրոնացված սերվեր Ծրագրի կատարված աշխատանքի մոնիթորինգ Կենտորնացված սերվերից կատարվող թարմացումներ |

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրի (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր) ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Պատվիրատուն Ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաների մասով Տեխնիկական բնութագրերը սահմանելիս նախատեսել է արդեն իսկ տեղադրված ESET NOD32 Smart Security Business Edition

համակարգչային հակավիրուսային և ESET Mail Security for Microsoft Exchange Server ծրագրերի ***արտոնագրերի երկարացում՝ 1 տարի ժամկետով***:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Հաշվի առնելով վերոնշված կարգավորումները՝ հարկ եմ համարում արձանագրել, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կարիքը, որի համար կազմակերպվել է Ընթացակարգը, հանդիսանում է ոչ թե նշված ծրագրերի արտոնագրերի ձեռքբերումը, որի պայմաններում հնարավոր կլիներ արձանագրել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջի խախտում, այլ կարիքն է հանդիսանում արդեն իսկ ձեռքբերված արտոնագրերի ժամկետի երկարացումը:

Ուստի այս դեպքում Պատվիրատուի կողմից Տեխնիկական բնութագրով ESET NOD32 Smart Security Business Edition համակարգչային հակավիրուսային և ESET Mail Security for Microsoft Exchange Server ծրագրերին հղում կատարելը նպատակ է ունեցել նկարագրելու ձեռքբերված (արդեն իսկ օգտագործվող) ծրագրերը, որոնց համար էլ կարիք է առաջացել արտոնագրերի ժամկետի երկարացման գնում կազմակերպելը, այսինքն՝ գնման առարկա է հանդիսանում ոչ թե արտոնագիրը, այլ արտոնագրի 1 տարի ժամկետով երկարացումը: Նման պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուն, Տեխնիկական բնութագրով նշելով ձեռքբերված ծրագրերի անվանումները, առաջնորդվել է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Հետևաբար, ուսումնասիրելով Վահե Գաբրիելյանի կողմից 02.08.2021թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշումը, գտնում եմ, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վահե Գաբրիելյանի կողմից 02.08.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**